Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (դրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմաներպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն՝ Թիվ 120 մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Սարիբեկյան Ռոզա

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երեվան 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքի դերը և ազդեցությունը երեխայի զարգացման առանձնահատկության ձևավորման ողջ կյանքի վրա անժխտելի է: Երեխան ծնվելով ընկնում է բոլորովին նոր վայր, դժվարություններով լի մի աշխարհ, որտեղ նրա հիմնական ու առաջին սյունը ընտանիքն է: Անժխտելի է այն, որ երեխայի առաջին դաստիարակը և ուսուցիչը նրա ծնողներն են, ովքեր պատասխանատու են այն միջավայրի համար, որտեղ մեծանում է իրենց երեխան: Ընտանիքում են ստանում աշխարհաճանաչման առաջին դասերը և ծանոթանում կյանքի տարրական կանոններին:Երեխայի դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը, դրանից էլ զատ՝ մանկապարտեզինը: Ուստի երեխայի անհատականության ձևավորման, ներդաշնակ զարգացման համար կարևոր է այդ երկու օղակների համագործակցությունը: Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը և թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների և հակակրանքների մասին:Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում:Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին ինքնուրույն հասնելու հաջողության: Դաստիարակը պետք է հետևի երեխաներին, որպեսզի հասկանա՝ ինչն է հասկանալի, ինչը՝ անհասկանալի նրանց: Հիմնվելով դիտարկումների վրա՝ պետք է դաստիարակը առաջարկի հավելյալ առաջադրանքներ, որոնք կնպաստեն մտածելուն: Երեխաների զարգացման կարևորագույն նախապայմանը բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական փոխկապակցվածություն է:

Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը երեխաների շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ ընտանիքը և մանկապարտեզը համատեղ աշխատում են երեխայի զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար:Որքան սերտ և արդյունավետ լինի մանկապարտեզ-ընտանիք կապը, այնքան ավելի շատ կշահեն երեխաները:

Նախադպրոցականի ծնողների մանկավարժական կրթության առանձնահատկությունները

Ընտանիքի եվ մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյադաստիարակման հիմնական օղակն ու վճռական գործոնը: Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակման նախահիմքերի կառուցումը: Երեխան, ծնվելով ընկնում է իր համար բոլորովին նոր վայր, որտեղ նրա առաջին ու հիմնական սյունը ընտանիքն է: Առաջինը տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա: Դաստիարակի աշխատանքի արդյունավետությունը կախված է ծնողների փոխհարաբերությունից, ընտանիքի կյանքի ձևից: Ընտանիքում են դրվում երեխայի բարոյական, գեղագիտական դաստիարակման հիմքերը: Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար: Յուրաքանչյուր երեխա իր ընտաիքի հայելին է և ծնողներն են պատասխանատու նրա հետագա ողջ կյանքի համար. երեխան ամենից առաջ իր ընտանիքում է տեսնում բարության, ուշադրության, քնքշանքի, թույլերի նկատմամբ խղճահարության ու օգնելու հիմքերը: Երեխան յուրացնում է ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները՝ նախապատրաստվում է հետագա աշխատանքային գործունեությանը: Ընտանիքում են դաստիարակվում երեխայի ինքնասպասարկումը, ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը, հոգատարությունը: Ընտանեկան դաստիարակությունը կարող է նպաստել երեխայի մոտ ձեռներեցության, տնտեսվարության, հաշվենկատության, անկախության և երեխայի արագ աճին:

Ընտանիքի անդամները պետք է.

1. Ժամանակ հատկացնեն իրենց երեխային մշտապես ուշադիր նայելու համար: Նկատեն հիվանդությունը, էմոցիոնալ հուզական դաշտը, քաշի ավելացումը կամ կորուստը, խնամքի պակասը:

2. Ավելի շատ ժամանակ անցկացնեն՝ լսելով երեխաներին: Հարցնեն ամեն ինչի մասին՝ սկսած այն բանից, թե ինչպես են գործերը մանկապարտեզում, մինչև այն, թե որքանով է նրան դուր գալիս իրենց պատրաստածը:

3. Ծիծաղեն միասին: Պիտի թողնել, որ երեխան սովորեցնի ծնողին իր պես երեխա լինել, կատակել, զվարճանալ իր ձևով:

4. Աշխատել աշխարհին նայել երեխայի աչքերով: Հիանալ առաջին ձյունով կամ աշնանային տերևների մեջ թավալ գալով:

5. Պիտի հրաժարվել երեկոյան կարևոր ժամերը նվիրել արտաժամյա աշխատանքին:

6. Օրը ճիշտ սկսել, լավ նախաճաշել, չմոռանալ հրաժեշտ տալ;

7. Համբուրել երեխային, գրկել նրան, սեղմել ձեռքը և ասել, որ սիրում եք նրան:

ՈՒսումնասիրելով բազմաթիվ ընտանիքներ՝ կարող ենք առանձնացնել երեք տիպի ընտանիքներ:

Բարեկեցիկ ընտանիք — այս ընտանիքներին բնորոշ է ընտանիքի անդամների միասնական պահանջը երեխայի նկատմամբ, ուշադրություն նրանց հարցերին, զարմանք հետաքրքրությունների նկատմամբ, ճիշտ կազմակերպված խաղեր և այլն: Այստեղ իրականացվում են ինչպես անհատական, այնպես էլ ընդհանուր աշխատանք: Շատ ծնողներ կարիք ունեն մանկավարժական գիտելիքների ընդլայման: Նրանց հուզում է իրենց երեխայի զարգացման մասին հարցերը, մտահորիզոնի շրջանակները, ի՞նչն է կարևոր երեխայի համար, ինչը՝ ոչ: Մշտապես առաջանում են նոր պահանջներ, որոնք կյանքն է թելադրում, որն էլ պահանջում է գիտելիքներ և պրակտիկ փորձ ամեն մի երեխայի, ամեն մի ընտանիքի հետ աշխատելիս: Ընտանիքի անդամների քանակը, միայնակ երեխայի հիմնախնդիրը, «տատիկի մանկավարժությունը» չեն կարող լինել որոշակի գործոն ճիշտ կամ սխալ դատիարակության համար: Մի ընտանիքում երեխան մեծանում է միայնակ, բայց դաստիարակության խնդիր չունի: ՈՒնի որոշակի

պարտականություններ. խաղալուց հետո հավաքում է խաղալիքները և դնում տեղը, օգնում է մայրիկին և այլն: Մեկ այլ ընտանիքում նորից երեխան մեծանում է միայնակ, բայց օգնում է հայրիկին, որը զբաղվում է տեխնիկայի վերանորոգմամբ: Կան ընտանիքներ, որտեղ երեխային դաստիարակում է միայնակ մայրը՝ համագործակցելով դաստիարակի հետ, լրացնելով մանկավարժական գիտելիքները՝ ճիշտ հաղորդակցվելով երեխայի հետ: Կան ընտանիքներ, որտեղ նկատվում են բացթողումներ, թույլ օղակներ՝ երբ երեխայի փոխարեն աշխատանքները կատարում են մայրը, ավագ քույրը և եղբայրը, ճիշտ չի դրված ընտանեկան աշխատանքային դաստիարակությունը: Երեխան չպետք է ոչ մի աշխատանք կատարի, քանի որ նրա փոխարեն այն կատարել է ավագ քույրը: Երեխան չի սովորում ինքնուրյնություն և ակտիվություն: Արտաքուստ բարեկեցիկ ընտանիքի օրինակ կարող է լինել հետևյալը: Ընտաիքում բոլորը համերաշխ են, աշխատասեր, հոգատար, սակայն վատ են վերաբերում երեխայի ընկերներին, չեն կամենում նրանց հյուր ընդունեն: Երեխան ապրում է իր ընտանիքի «նեղ աշխարհում»: Ակնհայտորեն անբարեկեցիկ ընտանիքում երեխայի նկատմամբ ոչ մի միասնական մոտեցում չունեն: Այստեղ երեխան դուրս է հսկողությունից: Լինում են նաև ընտանեկան բռնության դեպքեր: Կան մայրեր, որոնք երեխայի մեջ տեսնում են իրենց կյանքի նպատակը և ըստ իրենց՝ մեծ եռանդով զբաղվում են նրա դաստիարակությամբ: Երեխաների մեջ ամրագրում են կամակորություն, եսասիրություն, անտարբերություն «սիրող մոր» պահանջների նկատմամբ: Դաստիարակը պետք է մեծ աշխատանք տանի նման մայրերի հետ, որ խուսափի մայրական կույր սիրուց առաջացող վտանգներից: Լինում է նաև հակառակը, երբ մայրը ոչ մի ուժ ու եռանդ չի դնում երեխայի դաստիարակման մեջ: Երեխան մնում է հսկողությունից դուրս և դառնում դյուրագրգիռ, նյարդային, վիրավորված, վախկոտ: Այս դեպքում դաստիարակը պետք է խիստ ձևով ազդի ծնողի վրա, նույնիսկ տանի դաստիարակչական աշխատանքներ: Պետք է այնպես անել, որ մոր մոտ չառաջանա տհաճություն իր երեխայից և նրան հոգս չհամարի: Ցույց տալ, որ երեխան ծնողի ուրախությունն ու կյանքի նպատակն է: Բացատրել, որ երեխայի հետ շփումը հարստացնում է մոր հոգևոր աշխարհը: Շատ դեպքերում, երբ երեխան մեծանում է առանց հոր, ստեղծում է հոր կերպար, պատմում երևակայած հայրիկի մասին: Չի կարելի կոտրել նրա ստեղծած աշխարհը, լավ հայր ունենալու երազանքը

նուրբ ձևով պահպանել: Երեխայի համար հավասարապես թանկ ու սիրելի են և՛ հայրը, և՛ մայրը, իսկ նրանցից մեկի բացակայությունը խաթարում է նրա կյանքը: Փոքրիկը դառնում է ինքնամփոփ, լռակյաց այն դեպքում, երբ ծնողներն իրարից հեռանում են թշնաամացած: Այս դեպքում դաստիարակի աշխատանքն ամենադժվարն է, բայց ամենաանհրաժեշտը: Երեխայի հետ տարվում է անհատական մոտեցում, հոգատարություն նրա կյանքի նկատմամբ: Տարվում է նաև աշխատանք ծնողների հետ: Ընտանեկան դաստիարակության մանկավարժությունը դաստիարակության ամենադժվար բաժինն է: Մանկավարժական մտքի պատմության բոլոր փուլերում ընտանեկան դաստիարակության հարցերն արծածվել են դասական մանկավարժների կողմից: Լուրջ թերություններից մեկն այն է, որ հաճախ ծնողները չեն ճանաչում երեխային, հաշվի չեն առնում նրա պահանջները, ձգտումները: Ծնողների հետ անհատական աշխատանքը պետք է զուգահեռվի կոլեկտիվ աշխատանքի հետ: Մանկապարտեզը պետք է ստեղծի միջավայր երեխայի ճիշտ զարգացումն գործում, ստանձնի խաղընկերոջ դերը: Երեխայի զարգացման կարևորագույն նախապայմանը զարգացման բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցաիալական, իմացական փոխկապակվածությունն է: Երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալիզացման գործում: Հայտնվելով մանկապարտեզում երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Նրա էմոցիոնալ դաշտում տեղի է ունենում փոփոխություն: Նրա հին խաղալիքները փոխարինվում են նորերով: Երեխայի համար մանկապարտեզում սահմանվում է հատուկ օրակարգ: Փոքրիկը զբոսնում է, խաղում, սնվում օրվա հստակ ժամերին: Ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք փորձում է ճշտությամբ կատարել: Նման պարզ խնդիրները երեխաների մոտ զարգացնում են պատասխանատվություն և ինքնուրույնություն:

https://www.youtube.com/watch?v=qGbRLhzvibw

https://youtu.be/LyuFCGcdXYg


1 2 3 4 + =
Աթինե
1 2 3 4 + =
Մամա

Մանկապարտեզ հաճախելիս զարգանում են երեխայի՝

• սոցիալական հմտությունները,

• թիմում աշխատելու հմտությունները,

• խոսքային հմտությունները,

• հուզական աշխարհը:

Երեխան սովորում է

• հարգել դիմացինին,

• ձեռք բերել նոր ընկերներ,

• ծանոթանալ նոր մոտեցումների և գաղափարների հետ,

• լայնացնել աշխարահայացքը:

Մանկապարտեզը հսկում է երեխայի հստակ սահմանված օրվա ռեժիմը: Երեխայի հետ աշխատում է մասնագիտակցված անձնակազմ: Մանկապարտեզից հետո երեխան ավելի արագ է հարմարվում դպրոցին: Այստեղ կարևորը ձեռք բերված կյանքի մի շարք հմտություններն են:

Մանկապարտեզ հաճախելու ցանկալի տարիքը երեք տարեկանն է, չնայած երեխա կա, որ մանկապարտեզ է հաճախում երկու տարեկանից:

Մանկապարտեզի կյանքում ծնողներին ներգրավելու համար դաստիարակը պետք է նախաձեռնող լինի և ուղիներ փտրի երեխայի միջոցով յուրքանչյուր ընտաիքի հետ հաղորդակցվելու համար: Տնօրինությունն ու դաստիարակը պետք է մշակեն հստակ նախագծեր ընտանիքի հետ աշխատելու համար:

Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին, տնային այցեր

Ընտանիքի ներգրավումով նախակրթարանի կյանքին և նրանց ճիշտ համագործակցությունով է պայմանավորված երեխայի անթերի զարգացումը: Այդ համագործակցությունից շահում է, թե՛ երեխան, թե՛ ընտանիքը, թե՛ մանկապարտեզը: Ծնողները համարվում են երեխայի համար առաջին ուսուցիչը և օրինակ ծառայողը: Այն մարդիկ, ովքեր անմիջապես շրջապատում են երեխային, պետք է հետևեն իրենց խոսքին և կատարած քայլերին, փոքրիկի հետ աշխատող մանկավարժը պարտավոր է

ուսումնասիրել նրանց ընտանիքը: Ընտանիքները տարբեր են իրենց բնույթով, կազմով և գործունեությամբ: Դաստիարակը պետք է տա ընտանիիքին տարբեր գաղափարներ և տեղեկություններ, որոնք կօգնեն երեխայի հետ հետագա շփմանը: Նա պետք է տարբեր ռազմավարություններ կիրառի, լինի ճկուն, ստեղծագործ, բարեհամբույր, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի նիստուկացին ավելի է հեշտացնում համագործակցությունը: Ծնողները կարող են ներգրավվել տարբեր նպատակներով: Օրինակ՝ նյութական միջավայրի բարելավմանը, խոհանոցային աշխատանքում, միջոցառումների ու էքսկուրսիաների ժամանակ: Շփմանը նպաստում են նաև ծնողական հավաքները, սեմինարները:

Ընտանիք-մանկապարտեզ դրական համագործակցությունը երեխաների շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ նրանք աշխատում են երեխայի զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Երեխան ամեն ինչ առաջինը սովորում է և փորձում է հենց ընտանիքում սկսած կերակրվելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամն են երեխայի համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, կրթում և դաստիարակում: Երեխան իր վրա կրում է ընտանիքի ազդեցությունը և դաստիարակությունը, պետք է լրջորեն հաշվի առնի անձի այդ փաստը: Երեխայի հետ աշխատելիս ամրապնդի կապը ընտանքի հետ՝ նկատի ունենալով դրանց առանձնահատկությունները և տարբերությունը: Երբ ընտանիքի անդամը դրական մասնացություն է ունենում մանկապարտեզի կյանքին, երեխայի ինքնահարգանքը մեծանում է: Դա երեխային վստահություն է ներշնչում, որ իր ընտանիքը հավանություն է տալիս մանկապարտեզին, որտեղ ինքն անցկացնում է առանց ծնողների: Երեխայի մասին տեղեկության փոխանակումից շահում են թե ծնողը, թե՝ մանկավարժը: Ծնողները կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվությունը: Սա օգնում է ծնողներին լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը և ավելի խորն ըմբռնել երեխայի զարգացման հետ կապված հարցերը, ճիշտ դաստիարակել երեխային տանը: Որոշ դեպքերում առկա է լինում դաստիարակ-ծնող փոխհարաբերության աններդաշնալություն, որը ծնողին հետ է պահում երեխայի ուսուցման գործին ակտիվ մասնակցությունից: Ծնողին պարապունքների և

կազմակերպչական աշխատանքներին ներգրավելու համար պետք է ստեղծագործ մոտեցում ցուցաբերել: Ժողովներն ու հանդիպումները անցկացնել ծնողներին հարմար ժամերին, օրերին: Թույլ տալ, որ ընտանիքն ինքն որոշի ընդհանուր գործին իր մասնակցության
լավագույն ձևը: Պահպանել սերտ կապ, զրուցել ընտանիքի անդամների հետ առնվազն շաբաթը մեկ անգամ: Որոնել տարբերակներ հայրերին, եղբայրերին, քույրերին մանկապարտեզի կյանքին ներգրավելու հանար: Հենվել երեխայի և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն, լինել համբերատար, պահպանել գաղտնիություն:
Ընտանիքին մանկապարտեզի գործունեությանը մասնակից դարձնելու համար կարելի է կիրառել բազում մեթոդներ, որոնք կօգնեն երեխային ինքնուրույն հասնել հաջողության:

- Շաբաթական կամ ամսական լրատուներ, տեղեկություն են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխանները,
- Ծնողական ժողովներ,
- Ծնողական համաժողովներ, որի նպատակը դաստիարակության փորձի փոխանակումն է,
- Առավոտյան հանդիպումներ,
- Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին, երբ դաստիարակը ներկայացնում է այն գործողությունը որը կատարվել է երեխայի հետ աշխատելիս,
- Վստահության հեռախոս,
- Կլոր սեղան,
- Զրույցներ՝ անհատական և խմբային,
- Խորհրդատվություններ,
- Երեխաների ընդհանուր զննումներ,
- Սպորտային միջոցառումներ:

Այցերն ընտանիքներ կարևոր տեղեկություն կարող է տալ երեխայի մասին և ամրապնդել փոխհաղորդակցումը: Դաստիարակը նախապես տեղեկացնում է իր այցելության

նպատակի մասին: Այստեղ է, որ դաստիարակը նկատում է, թե ինչպիսին է ընտանիքում մանկավարժական մեթոդները:

Տնային այցերը մասնագետին երեխայի և ծնողների կյանքի պայմանների մասին լրացուցիչ հնարավորություն է տալիս: Մանկավարժին թույլ է տալիս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է երեխան: Այցերի ծրագրերը խիստ բազմազան են: Կարևոր է թե այցի նպատակը ծնո՞ղն է, երեխա՞ն, թե ընտանի՞քը: Այցի ժամանակ կարելի է տունը նմանեցնել խմբասենյակին և կիրառել երեխայակենտրոն մոտեցում: Պետք չէ ակնկալել, որ տնային այցերը կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ: Դաստիարակը պետք է ունենա լավ տրամադրություն, մոռանա բողոքների մասին, թույլ չտալ դիտողություններ և քննադատություններ, խորհուրդներ տալ զգուշավորությամբ:Բանավոր խոսքը նույնպես մեծ դեր ունի երեխայի համակողմանի զարգացման մեջ: Մանկավարժը երեխայի հետ շփվելիս պետք է խոսի հստակ և հատ-հատ:Արագախոսությունը երեխայի մոտ հետագայում առաջացնում է թոթովախոսություն:

Ծնողական ժողովներ**,** առաջարկությունների արկղիկ

Ժողովները մանկապարտեզի և ընտանիքի միջև կարևոր դեր են խաղում: Դրանք հիմք են ծառայում ի ցույց դնելու այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէ արծարծել սովորական աշխատանքային ժամերին: Ժողովներ վարելիս մանկավարժը պետք է ձգտի օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, ցանկալի հյուր զգան, քանի որ պարտեզը մանկավարժի «տարածքն» է: Շփման ժամանակ օգտագործվում է ոչ նեղ մասնագտական բառապաշար, որ շփումը մտերմիկ լինի: Անհրաժեշտ է ընդգծել երեխայի դրական հատկանիշները, ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են օգնել իրենց երեխային: Ծնողների գնալուց հետո մանկավարժը պետք է գրի առնի ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկությունները ու քնարկված հարցերը:

Ծնողական ժողովները լինում են ընդհանուր և խմբային:

- Ընդհանուր ժողովները կազմակերպվում են տարին երկու-երեք անգամ: Դրանք իրականացվում են հիմնականում մանկավարժական խորհրդի և տնօրենի գլխավորությամբ: Քննարկվում են խնդիրներ կապված նոր ուսումնական տարվա և

աշխատանքների ամփոփման հետ կապված: Այս դեպքում մանկավարժը պետք է զրուցի ոչ միայն երեխաների, այլև առօրյա հոգսերի, մանկապարտեզի մշակութային կյանքի և այլ իրադարձությունների շուրջ: Պետք է օգտագործել հաղորդակցման նորաձև և մտերմիկ ոճեր: Ընդհանուր ժողովների կարելի է հրավիրել բժշկի, հոգեբանի, արվեստագետի, մանկագրի այլ մասնագետների:

• Խմբային ժողովները անցկացվում են 2-3 ամիսը մեկը անգամ: Դաստիարակը զեկուցում է խմբի ընդհանուր կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին: Խոսքով կարող են հանդես գալ ծնողներ և այլ մասնագետներ:

Գոյություն ունեն նաև ծնողական համաժողովներ, որոնց հիմնական նպատակը պետք է լինի ընտանեկան դաստիարակման փորձի փոխանակումը: Ժողովի ժամանակ ելույթ են ունենում տարբեր մասնագետներ, կազմակերպվում են ցուցահանդեսներ՝ երեխաների կամ մանկավաժների ձեռքի աշխատանքներից: Համաժողովի վերջում մասնակիցները հրավիրվում են «կլոր սեղանի» շուրջ: Որոշվում են ապագա մրցույթների, ծրագրերի օրերն ու ժամերը: Դաստիարակը պետք է իմանա մասնակիցների անունները, չի կարելի ձգձգել միջոցառումը: Որոշ ծնողների խոսքից հետո պետք դաստիարակը պետք է ընդհանրացնի իր ասելիքը՝ համեմելով խմբի երեխաների կյանքի կոնկրետ օրինակներով, զվարճալի իրադարձություններով:

Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

Ծնողների հետ աշխատանք տանելու ժամանակ անհրաժեշտ է ստեղծագործական և ճկուն մոտեցում: Օգտագործել բազմատեսակ ձևեր, որոնցից է ժողովների անցկացումը ծնողներին հարմար ժամերին: Թույլ տալ ծնողներին, որ իրենք որոշեն ընդհանուր գործին իրենց մասնակցության լավագույն ձևը: Հետևել, որ մյուս մանակավարժները՝ երաշժտության, լոգոեպեդը, գոնե շաբաթը մեկ անգամ հանդիպեն ծնողներին: Փորձեր են կատարում ներգրավել ոչ միայն ծնողներին, այլև ընտանիքի մյուս անդամներին: Հենվել ընտանիքի ուժեղ կողմերի վրա՝ քիչ-քիչ ստվերում թողնելով թույլ կողմերը: Համերաշխությունը կարևոր գործոն է աշխատանքի ժամանակ, քանի որ մեծ ջանքեր են պահանջում: Ամենակարևոր պայմանը գաղտնիության պահպանումնե է յուրաքանչյուր ընտանիքի հետ աշխատելիս:

Կան նաև ոչ պաշտոնական գրառումներ, որը մանկավարժը երեխայի միջոցով տուն է ուղարկում: Դրանք պարունակում են ընտանիքի անդամի համար տեղեկություններ երեխայի մասին: Պարունակում են նաև շնորհակալական խոսքեր մանկապարտեզի աշխատանքին այս կամ այն կերպ մասնակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են ուղարկել շնորհակալական կամ խնդրանք պարունակող գրություններ: Պատի տեղեկատվական թերթերը օգնում են ընտանիքին միշտ թարմ տեղեկություն հաղորդելու համար: Դրանց միջոցով ազդարարվում են ժողովները, ամենօրյա դասացուցակը, ուսումնական հաստատության անցուդարձը:

Խորհուրդներ ծնողներին աշխարհի ականավոր մարդկանցից.

*** https://youtube.com/shorts/w4uxckjsavA

• Ձեր երեխան դաստիարակեցեք՝ ցույց տալով անոր ձեր սեփական անթերի օրինակը: Երեխան կուզե տեսնել ձեր արարքները , այլ ոչ թե լսել ձեր խոսքերը:

• Ձանացեք երեխայի աչքերուն մնալ ձեր բարձունքին վրա: Ան թող չտեսնե ձեր թերություններն ու թուլությունները:

• Ուշադիր եղեք ձեր գործած բառերուն, երբ երեխային հետ կխոսիք:

• Երեխան փոքր և անզոր էակ մը ըլլալով՝ կուզե իր կողքին ունենալ պաշտպանող «անվիճելի հեղինակություն»: Երեխան միշտ ծնողե կսպասե ֆիզիկական և հոգեբանական պաշտպանություն:

• Եթե դուք ստիպված եք պատժելու երեխային, ձեր դեմքի վրա ո՛չ զայրույթի, ո՛չ ալ ատելության արտահայտություն թող ըլլա: Երեխան արագ կը մոռնայ ապտակը կամ պատիժը, բայց երբեք չի մոռնար ձեր հայացքը՝ լեցուն զայրույթով և ատելությամբ:

• Երեխան պետք է անսահմանորեն վստահի և ենթարկվի իր ծնողքին: Համերաշխ ընտանիքներու մեջ ասիկա երեխայի դաստիարակման հիմնական կանոնն է:

Մայր Թերեզա

Երեխան ուի իր առանձնահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով:

Ժան Ժակ Ռուսո

Նա, ով ցանկանում է երեխային լավ դաստիարակել, դատապարտված է մշտապես հետևելու արդարամիտ հայացքների:

Օնորե դը Բալզակ

Ընտանեկան դաստիարակության մեջ խաղը կարևորագույն դեր է իրականացնում: Երեխան ինչպես ներգրավում է խաղի մեջ, այնպես էլ հետագա կյանքում աշխատանքի մեջ: Հետևաբար ապագա առաջնորդի դաստիարակումը տեղի է ունենում հիմնականում խաղի մեջ:

Փոքր տարիքում հիմնականում երեխա խաղում է շատ պարզ ձևով: լավ կազմակերպված ընտանիքը ժամանակի ընթացքում երեխային վստահում է ավելի բարդ աշխատանք, որը կարևոր է ամբողջ կյանքի համար: Հարկավոր չէ երեխային ավելի շուտ շեղել խաղից և տեղափոխել իրական աշխարհ: Այս ամենը բռնություն է երեխայի նկատմամբ: Երեխայի խաղը ղեկավարելիս ծնողը պետք է լավ մտածի, թե ինչ է դա և ինչով է տարբերվում աշխատանքից: Խաղի և աշխատանքի միջև շատ տարբերություն չկա, քանի որ լավ խաղը նման է լավ գործի, վատը՝ վատ գործի: Խաղը պասիվ է, երբ երեխան կրկնօրինակում է ուրիշի գործերը, իսկ ակտիվը՝ փորձում է ավելի զարգացնել: Խաղը երեխային սովորեցնում է այն ֆիզիկական և մտավոր ջանքերը, որոնք անհրաժեշտ են աշխատանքի համար: Կան ծնողներ, որոնք խաղի ժամանակ անուշադրության են մատնում երեխային և երեխան ինքնուրույն է կազմում աշխատանքը: Կան նաև ծնողներ, որոնք մեծ ուշադրություն են դարձնում երեխայի խաղերին: Եթե չափը անցնում են, ապա խանգարում են երեխային: Պետք է նրան ազատություն տալ, որ նա իրական կյանքում էլ որևէ մեկից կախում չունենա: Միայնակ խաղի ժամանակ զարգանում են երեխայի երևակայությունը, կառուցողական հմտությունները, նյութական կազմակերպման հմտությունները: Հետզհետե խաղի մասշտաբը պետք է ընդլայնել և երեխայի ընկերական շրջապատը նույնպես: Ժամանակի ընթացքում երեխան խաղում է ոչ միայն ծնողի հսկողությոն տակ, այլև նոր ընկերների հետ՝ նոր շրջապատում: Այստեղ նա հանդես է գալիս որպես թիմի անդամ, որը ոչ միայն խաղային է, այլև կրթական:

*** https://youtube.com/shorts/4Gr3fXSPuWU

Յուրաքանչյուր ծնող պետք է լավ գիտակցի, թե ինչ է դաստիարակում իր երեխայի մեջ, գիտակցի նաև, որ աշխատանքում աճում է ապագա քաղաքացի և ապագա մարտիկ: Ծնող իր աշխատանքով պետք է օրինակ ծառայի երեխային: Երեխան ծնողի նայելիս պետք է տեսնի նրա աշխատասիրությունը, այլ ոչ թե հագուկապը: Մենք դաստիարակում

ենք երեխային յուրաքանչյուր պահի, նույնիսկ այն ժամանակ, երբ ուղղակի նայում ենք նրան: Երեխայի դաստիարակումը ավելի դյուրին է, քան վերադաստիարակումը: Բոլոր բացթողումները դաստիարակության ժամանակ նորից սովորեցվում են վերադաստիարակության ժամանակ: Պահանջվում է ավելի շատ ներուժ և համբերություն: Այս ամենը շատ ժամանակ հյուծում է ծնողին և փչացնում ծնող-երեխա կապը: Ծնողները ավելի շատ ջանք ու եռանդ պետք է գործադրեն դժվար դաստիարակվող երեխաներին կարգի բերելու համար:

Ծնողությունը մեր կյանքի ամենակարևոր ոլորտն է: Մեր երեխաները մեր երկրի ապագա քաղաքացիներն են և աշխարհի քաղաքացիներ:Մեր երեխաները ապագա հայրեր և մայրեր են: Նրանք նույնպես կլինեն իրենց երեխների դաստիարակները: Երեխաները պետք է մեծանան՝ որպես հիանալի քաղաքացիներ, լավ հայրեր և մայրեր, բայց սա բոլորը չէ. մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակումը մեր երջանիկ ծերությունն է, աղքատ դաստիարակումը մեր ապագա վիշտն է: Սրանք մեր արցունքներն են, սա մեր մեղքն է այլ մարդկանց, ամբողջ երկրի առջև:

Անտոն Սեմյոնովիչ Մակարենկո

Ձեր ստեղծագործ երեխան

Երեխային մանկապարտեզին ադապտացնելու խորհուրդներ.

1. Երեխային որոշ ժամանակով միայնակ թողնել: Ծնողը կարող է 2 ամսականից սկսած վարժեցնել երեխային միայնակ մնալուն: Նա պետք է ընտրի մի հարմար վայր (օրինակ մանկական գորգի վրա) և երեխային 10-20 րոպե հանգիստ թողնի՝ անհետանալով նրա տեսադաշտից: Այս ընթացքում նրան չենք գրկում, հետը չենք խոսում չենք մոտենում: Կարող ենք գտնվել նույն սենյակում, բայց ամեն մեկը զբաղվի իր գործով: Այս իրավիճակները բեկումնային են երեխայի զարգացման համար: 6 ամսականից սկսած կարող ենք երեխային տալ որևէ խաղալիք մի օրինակից և թույլ տալ ինքնուրույն խաղալ: Այս ընթացքում եթե երեխան լացի, կարող ենք մոտենալ և հասկացնել նրան, որ կողքի սենյակում ենք և շուտով կմիանանք իրեն: Կարող ենք միացնել դասական երաժշտություն, բայց ոչ հեռուստացույց, քանի որ դրա ձայնն ու պատկերնենը կշեղեն երեխայի ուշադրությունը: Պետք է թույլ տալ, որ երեխան ինքնուրույն զբաղմունք գտնի, քանի որ այն նրա զարգացման կարևոր հտություններից է: Բոլոր երեխաներն էլ ունեն

միայնակ մնալու հմտություն, և ծնողի պարտականությունն է նպաստել, որ այն զարգանա: Պետք է անհանգստանալ, երբ երեխան հրաժարվում է միայնակ մնալուց և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ:

2. Երեխայի մոտից հեռանալիս միշտ հրաժեշտ տվեք և զգուշացրեք, որ գնում եք: Բազում դեպքերում երեխային շեղում են մյուս մեծահասակները, իսկ ծնողները թաքուն հեռանում են: Այս դեպքում երեխան լալիս է և ընկնում հիստերիայի մեջ, իսկ մեծերը սկսում են համոզել, որ նրա ծնողները հարևան սենյակում են: Այս վարվելակերպը երեխային սթրեսի մեջ է գցում: Անկախ երեխայի տարիքից պետք է մոտենալ նրան և զգուշացնել, որ հեռանում եք և նրան թողնում հարազատ մարդու մոտ: Իսկ եթե երեխան այս ամենից հետո կամակոր լաց է լինում, ապա խնամակալը խաղի միջոցով կարող է շեղել նրա ուշադրությունը: Ուշադրությունը շեղող թեման միշտ նույը չի կարող է լինել, քանի որ սա երեխայի մոտ առաջացնում է ոչ ցանկալի պայմանական ռեֆլեքս: Երեխան աստիճանաբար ադապտացվում է և որոշ ժամանակ անց նրան շեղելու կարիք չի լինի: Այս ամենը արվում է միայն մի բանից հետո, երբ մայրիկը նշում է, որ հեռանում է: Մայրիկի վերադարձին նայել ոչ ավելորդ հուզականությամբ, որ դա իրարանցում չառաջացնի:

3. Նախապատրաստեք երեխային և սկզբնական շրջանում այցելեք մանկապարտեզ երեխայի հետ միասին: Անհրաժեշտ է նախօրոք երեխային պատմել մանկապարտեզի մասին, որ այնտեղ շատ երեխաներ կան, հետաքրքիր խաղեր են խաղում, պատմել ձեր իսկ մանկապարտեզի մասին՝ զետեղելով միմյանց դրականը և ցույց տալ լուսանկարներ:

*** https://youtube.com/shorts/k0ffV4Jc7TM

Երեխային մանկապարտեզին ադապտացվելու համար անհրաժեշտ է միջինը մեկից երկու շաբաթ: Երբ երեխան առաջին իսկ օրվանից հանգիստ հաճախում է պարտեզ, ապա ծնողը որևէ հոգս չունի դրա հետ: Հակառակ դեպքում պետք է համագործակցել մանկավարժների հետ և երեխայի հետ որոշ ժամանակ մնալ այնտեղ: Թողնել երեխային խաղա, ապա առանց նրա համաձայնության տանել տուն: Ամեն օր պարտեզում մնալու ժամանակը ավելացնել: Կարող եք երեխային սպասել մեկ այլ սենյակում, ոչ մի դեպքում առանց երեխային հրաժեշտ տալու չհեռանալ: Այս գործընթացը տևում է մեկից երկու շաբաթ: Ծնողը պետք է լինի հետևողական, վստահի մանկավարժին և ամեն ինչ կընկնի

հունի մեջ: Այս քայլերով երեխային նախապատրաստում ենք ոչ միայն մանկապարտեզին, այլև դպրոցին և կյանքի՝ որպես հասուն մարդիկ:

• Խորհուրդներ ծնողներին երեխայի վարքը և մտահորիզոնը զարգացնելու համար
• Հաճախակի զբոսնեք ձեր երեխաների հետ և զրուցեք ամեն ինչի մասին:
• Փորձեք տարբերել կերպարներ և ձևեր երկնքում սահող ամպերում:
• Ազմակերպեք պարզ բառախաղեր: Թող երեխան թվարկի շարժվող և անշարժ առարկաներ:
• Խնդրեք նրան ուշադիր լսել շրջապատի ձայները, հետո տարբերել դրանք:
• Կարևոր են նկարչություն ու գունազարդումները:
• Երևակայությունը խթանում է նաև զգեստափոխումները:
• Օգնել երեխային, երբ նա դժվարանում է ինչ-որ բան նկարելիս: Ճիշտ պատկերացում տվեք ինչ-որ առարկա նկարելիս:
• Աշխատանքի ժամանակ օգտագործել այն, ինչ որ կա ձեռքի տակ՝ ամսագրեր, թերթեր, գործվածքներ, թելեր, պարաններ և այլն;
• Աշխատանքը գնահատելիս «Լավ է, գեղեցիկ է» ասելու փոխարեն, հստակ նկարագրեք այն ամենը, ինչ տեսնում եք:
• Թույլ տվեք երեխային պատմել իր նկարած նկարի մասին:
• Ցուցադրեք երեխայի աշխատանքը՝ այն փակցնելով պատին:

Հարկավոր է երեխայի համար ամեն օր կարդալ, սակայն ընթերցանությունը պետք է լինի դանդաղ պարզ ու արտահայտիչ: Նրանք սիրում են ձեռք տալ գրքին, թերթել էջերը և զարմանալ նկարներով: Պետք չէ նրանց արգելել բարեկամանալ գրքի հետ: Պետք է խոսել նկարների մասին: Պատմությունը ներկայացնելու համար պարտադիր չէ գիրքը կարդալ: Կարելի է տարբեր ժեստերի միջոցով ցուցադրել գրքում զետեղված ստեղծագործությունը: Նախքան պատմվածքի ընթերցելը կարող ենք ցույց տալ գրքի արտաքին տեսքը, նրա միջի պատկերները, այնուհետև սկսել ընթերցանությունը: Ընթերցելը պետք է դարձնել ամենօրյա գործ և այն վերածել հաճելի խաղի: Այդ ժամանակ տարբեր հնչյունների միջոցով կարելի է նմանակել կենդանիների ձայները, շրջապատում լսվող տարբեր ձայները: Ընթերցանության ժամանակ կարելի է նաև բեմադրել ընթերցած

նյութը՝ խնդրելով երեխային նմանակել այս կամ այն հերոսի: Այս դեպքում երեխան ավելի շուտ է ըմբռնում պատմության իմաստը և այն ամբողջովին տպավորում է հիշողության մեջ: Հարցերի միջոցով երեխայի ուշադրությունը ավելի ենք սևեռում պատմության վրա, իսկ նրան հարցեր տալով զարգացնում ենք երևակայությունը: Անպայման պետք է թույլ տալ, որպիսի երեխան էլ արտահայտի իրեն հուզող հարցերը: Այս բոլոր գործողությունները ավարտելուց հետո կարելի է պատրաստել սեփական գրքերը և այնտեղ տպագրել տարբեր պատմվածքներ, բանաստեղծություններ և այլն: Միշտ էլ չափազանց շատ ու բազմաբնույթ են եղել մանկապարտեզի հոգսերը, որոնք իրենց մեջ պարունակում են նյութական բազայի ստեղծումից մինչև երեխաների իրավունքների պաշտպանության և անհատականության զարգացման հարցեր: Երեխայի իրավունքների առաջին պաշտպաններն են ծնողն ու դաստիարակը: Սակայն այդ հարցով պետք է զբաղվեն ոչ միայն նրանք, այլև այլ ոլորտներ՝ օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ, զանգվածային լրատվական միջոցներ, հասարակական կազմակերպություններ: Այս ամենը հասարակութանը կտանի լայն հիմնախնդիրների բացահայտման հնարավոր լուծումների որոնման և ճիշտ որոշումների կայացման:

Ընտանիքի եվ մանկապարտեզի համագործակցությունը՝ որպես երեխայի զարգացման գրավական

Վաղ տարիքի երեխաների սոցիալական զարգացումը կանոնակարգվում է երկու կառույցների միջոցով՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք: Որոշ մանկավարժներ, վստահելով իրենց գիտելիքներին, համարում են, որ իրենք բոլորից ճիշտ են դաստիարակում: Այդպես են մտածում նաև շատ ծնողներ՝ կարծելով, որ իրենց երեխային ավելի լավ գիտեն և հաջողությամբ կարող են լուծել նրան վերաբերող ցանկացած խնդիր: Այս երկու մոտեցումներն էլ թերի են: Անհրաժեշտ է ի մի բերեր այդ երկու սոցիալական ինստիտուտների (ընտանիքի և նախադպրոցական հաստատության) ուժեղ և թույլ կողմերը: Երեխայի զարգացման որոշ ոլորտներում, օրինակ՝ հուզական, ֆիզիկական, ընտանիքի հնարավորություններն են ավելին, իսկ ուսուցման, ստեղծագործական ունակությունների զարգացման և այլն հարցերում՝ մանկապարտեզինը և այլն: Առավել արդյունավետ աշխատանքի համար ժամանակակից

մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում պետք է դրվի համագործակցությունը: Մանկավարժները պետք է նախաձեռնող լինեն, ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի զարգացման: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է, որ մանկապարտեզը դառնա բաց համակարգ: Ամենից առաջ անհրաժեշտ է մանկապարտեզի դռները լայն բացել ծնողների և ընտանիքի մյուս անդամների առաջ: Հարկավոր է ընդլայնել ավանդական հաղորդակցման (տոնակատարություններ, ծնողական հավաքներ և այլն) շրջանակները: Վաղ մանկության շրջանում ինքնությունը, անհատականությունը երեխաներին իրենց հաստատելու, ապահովություն, խնամք և բարեկեցություն ունենալու համար կախված են լինում իրենց ընտանիքներից: Ընտանիքների և մանկապարտեզի հաղորդակցումը նպաստում է նրանց փոխըմբռմանն ու կողմնորոշմանը:

Ընտանիքների և նախադպրոցական հաստատության գործունեության համատեղ ծրագիրը հեշտացնում է երեխայի սոցիալական զարգացումը՝ սոցիալականացումը: Ինչու է անհրաժեշտ խթանել մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը: Երբ ընտանիքի անդամները դրական մասնակցություն են ունենում մանկապարտեզի կյանքին, նույնիսկ եթե այդ մասնակցությունը կարճատև է և ոչ պարբերական, երեխայի ինքնագնահատականը մեծանում է: Երեխային վստահություն է ներշնչում այն հանգամանքը, որ իր ընտանիքը հավանություն է տալիս տան աշխարհից լիովին տարբերվող այն մյուս աշխարհին, որտեղ ինքն անցկացնում է առանց ծնողների: Մանկապարտեզի կյանքին ընտանիքների մասնակցությունը էլ ավելի է ոգեշնչում երեխաներին:

Ի՞նչ են շահում դաստիարակներն ու պարտեզը Ծնողների և դաստիարակի միջև երեխայի կարիքների և զարգացման մակարդակի մասին տեղեկությունների փոխանակումից շահում է թե՛ ընտանքը, թե՛ մանկապարտեզը: Ծնողները, լինելով տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվություն: Մանկապարտեզի աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում, երբ ծնողներն ու ընտանիքը դառնում են նրա գործընկերը, ընդունում և շարունակում են մանկապարտեզի նախաձեռնությունները, ինչպես նաև

իրենք են նախաձեռնություններով հանդես գալիս: Ի՞նչ է շահում ընտանիքը Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ծնողներին ավելի լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը, հասկանալ իրենց երեխայի հաջողությունների և դժվարությունների հիմքերն ու պատճառները, դիտարկել երեխայի վարքը, հասկանալ երեխայի զարգացման հետ կապված հարցերը, որոնք էլ ավելի հեշտ կդարձնեն երեխայի դաստիարակումը տանը: Ծնողներն ու ընտանիքը կարող են մասնագիտական խորհրդատվություն ստանալ երեխայի զարգացմանն առնչվող այն բոլոր հարցերում, որոնցում իրենք դժվարանում են կամ չեն կողմնորոշվում: Մանկապարտեզի կյանքում ներգրավելու համար դաստիարակները պետք է նախաձեռնող լինեն և ուղիներ փնտրեն երեխաների միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար: Դրա համար տնօրինությունը և դաստիարակները պետք է մշակեն և զարգացնեն ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ աշխատելու համար անհրաժեշտ հստակ նախագծեր և դրանց իրականացման մեթոդներ: Որպեսզի ընտանիքի մեծամասնությունը ներգրավվի, պետք է անհատական մոտեցուն կիրառվի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով և ներկայացնելով այս թեման, հանգում եմ այն եզրակացության, որ կրթելու և դաստիարակելու հիմքը դրվում է ընտանիքում:: Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, և հարաբերությունը պետք է լինի բարեկամական-գործընկերային:

Ծնողների հետ անհատական աշխատանքը պետք է զուգահեռվի կոլեկտիվ աշխատանքի հետ: Ծնողների հետ աշխատելիս անհրաժեշտ է բացահայտել, թե երեխան տանը և մանկապարտեզում ինչպես է վերաբերվում աշխատանքին, աշխատելիս կամային որակներ դրսևորում է, թե ոչ: Կարևոր է ծնողներին բացատրել, որ եզրակացություն անելիս պետք է ելնել տարբեր երևույթներից և ոչ թե հակառակը, սկզբում եզրակացնել, հետո արձանագրել փաստը:

Իրականում մանկապարտեզը դա սոցիալական հմտությունների ձեռք բերման մի մեծ դպրոց է, որտեղ կան կյանքի տարբեր իրավիճակներ, շփման տարբեր ձեւեր, մարդկային բնավորությունների տեսակներ: Այդ դպրոցը բարեհաջող հաղթահարած երեխաները

դառնում են առողջ հասարակության առողջ անդամներ: Սովորում են բախվել դժվարություններին, հաղթահարել դրանք եւ շարժվել առաջ:

• Ինչպես ծնողների կոլեկտիվի, այնպես էլ առանձին ծնողների հետ աշխատանքը կունենա արդյունք, եթե լավ ենք տիրապետում՝ ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին:

• Դրական արդյունք կստանանք այն ժամանակ, երբ ծնողների և դաստիարակների միջև կա համատեղ աշխատանք և միասնական պահանջ երեխաների նկատմամբ:

• Այն ծնողներին, ովքեր չունեն մանկավարժական կրթություն, անհաժեշտ է տալ որոշակի գիտելիքներ տարիքային և անհատական առանձ նահատկությունների մասին, ինչը հնարավորություն կտա երեխաների մեջ տեսնել և՛ դրականը, և՛ բացասականը և վերլուծել նրանց արարքները:

• Ընտանիքի և մանկապարտեզի կապը երեխաների նկատմամբ անհատական մոտեցում դրսևորելու կարևոր պայմաններից մեկն է:Դրա իրականացումը պահանջում է խորը գիտելիքներ, հաղորդակցական կարողություններ և հմտություններ:

Միջոցառումները տալիս են հետևյալ արդյունքները.

• Երեխաների լավ վարք
• Համախմբածություն
• Մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի մեջ
• Ծնողների վստահության բարձրացում
• Ծնողների ոգևորվածություն

Մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար արվել է մեր համատեղ աշխատանքը, որը երկուստեք հաճելի է: Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ և փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել: Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների

միջոցով ծնողներն ու ուսուցիչները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս «Մանկավարժություն», Երևան 2005թ.

2.Ղույումչյան Գ. Ե. «Մանկավարժություն», գիրք 2, Երևան 2005թ.

3.Մակարենկո Ա. Ս. «Դաստիարակություն ծնողության վերաբերյալ», 1940թ.

4.Մարության Ա. Ս., Դալլաքյան Ա. Մ. «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, Երևան 2008թ.

5.Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան 2010թ.

6.Պետրոսյան Հ. Հ. «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները», 1-ին և 2-րդ մաս, Երևան 2007թ.

7.Սմբատյան Լ. «Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում», Երևան 2014թ.

8.Սուխոմլինսկի Վ. Ա. «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Երևան 1977թ.

9.«Նախաշավիղ» հանդես

10.Осипова Л. Е. «Работа детского сада с семей» М. 2008г.

11.Էլեկտրոնային կայքեր 22

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....

Նախադպրոցականի ծնողների մանկավարժական կրթության

առանձնահատկությունները.....

Ընտանիքի եվ մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում.....

Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին, տնային այցեր.....

Ծնողական ժողովներ, առաջարկությունների արկղիկ

Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

Խորհուրդներ ծնողներին աշխարհի ականավոր մարդկանցից.....

Ձեր ստեղծագործ երեխան.....

Խորհուրդներ ծնողներին երեխայի վարքը և մտահորիզոնը զարգացնելու

համար.....

Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը.....

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը՝ որպես երեխայի զարգացման

գրավական.....

Եզրակացություն.....

Գրականության ցանկ. 23